թյան կարևոր դեղերն են:

2. ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի քանակական սկզբնաղբյուրների վավերագրման բաժնում վերջին շրջանում, ելակետ ունենալով քանակական վերլուծության մեթոդը, մշակվել են 600 խաղիկի առանցքային վարկածները: Մեր նպատակն է եղել ընտրության ենթարկել այդ խաղիկներում առկա շրջապատող բնության այս կամ այն տարրը: Սույն մեթոդը հանգեցրել է որակական բնութագրման, բացահայտել ներքին օրինաչափությունները:

3. Բնությունը հայ ժողովրդական խաղիկներում ներկայանում է բազմատեսակ տարրերով, որոնք ստեղծում են վիպական յուրահատուկ բնանկար՝ կախված ես-ի և ոչ ես-ի հարաբերակցությունից:

4. Բանաձևային արտահայտություններն արդյունք են խաղիկի ստեղծման, կենցաղավարման, դրանում արտահայտված հուզական տրամադրության և այլ հանգամանքների:

5. Քանակական վերլուծության մեթոդով ուսումնասիրելով փոխառնչակցումը շրջապատող բնության հետ, հնարավոր է դառնում առավել հրատակորեն լուսաբանելու խաղիկների երգարվեստի բնագավառում իրականության արտացոլման, տեղայնացման, տարբերակայնության և, վերջապես, տնտեսական, քաղաքական, մշակութային կապերի ու փոխազդեցությունների հարցերը:

ԼԻԼԻՑԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆԸ ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ԱՐԴԻ ՀԱՐՄԱՆԵԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐՈՒՄ

/Ըստ Երևան քաղաքի
էթնոսոցիոլոգիական հետազոտության նյութերի/

1. Հայերի ընտանեա-ամուսնական հարաբերություններում կարևոր տեղ է գրավում ամուսնություն կնքելու հիմնական նախապայմաններից մեկի՝ ծնողական համաձայնության անհրաժեշտության, պարտադրության հարցը:

2. Երևանի հարսանեկան արարողակարգի արդի վիճակի հետազոտությունը ցույց է տալիս, որ նշված հարցադրման նկատմամբ դրական կամ բացասական վերաբերմունքը ներկայում զգալիորեն որոշում է բուն իսկ հարսանիքի համապատասխան ձևը՝ արվում է այն ավանդույթային, թե՞ ժամանակակից ծիսակարգով:

3. Ամուսնությանը ծնողական համաձայնության անհրաժեշտության

նկատմամբ դրական վերաբերմունքի դեպքում հաճախ հավաստված են հարսանիքներ ավանդութային տարրերով /քավորով, ազաբաշիներով, հարսնաքրոջով և այլն/, որպիսի պարագայում հայերի մեջ նվազ տարածված է այնպիսի ձևը, ինչպիսին է ամուսնական ծամփորդությունը: Նույն այդ միտումը դիտվում է նաև հարսանեկան հանդեսի նախասիրած ու ցանկալի ձևերը բացահայտելիս՝ մայրաքաղաքի բնակչության այդ մասի մեջ առավել մեծ քանակ են կազմում ավանդութային հարսանիքի կողմնակիցները /74, 3%/:

4. Երևանի բնակիչների այն խմբում, որն ամուսնությանը ծնողական համաձայնությունն անհրաժեշտ չի համարում, ավանդութային հարսանիքների բաժինը որոշ չափով պակաս է, և արդեն հանդիպում են նոր ձևեր՝ արդի հարսանեկան երեկույթը /խնջույթ/ և ամուսնական ծամփորդությունը: Ուշագրավ է, որ նույն այդ անձինք ավելի բարեհաճ են հարսանեկան նոր ձևերի և դրանց մոտակա հեռանկարը բացահայտելու նկատմամբ:

5. Էթնոսոցիոլոգիական ուսումնասիրության բնութագրումների մեջ, տվյալ հարցը լուծելիս, առավել էական գործոն է դառնում մայրաքաղաքի բնակիչների տարիքը, ինչպես նաև ամբողջովին դրա հետ առնչվող կրթական մակարդակը և արտադրական գործունեության բնույթը /սոցիալ-մասնագիտական պատկանելությունը/: Ներկայում էլ ավագ և միջին սերունդը բավական հստակ կողմնորոշում է դրսևորում ամուսնությանը ծնողական համաձայնության նկատմամբ, մինչդեռ երիտասարդությունը մեծ մասամբ այլևս չի բաժանում այդ ավանդութային տեսակետը:

6. Հետազոտված նյութի քննությունը վկայում է, որ ամուսնության կնքելու նկատմամբ հայերի ավանդութային դիրքորոշումը, ինչպես նաև հարսանեկան ողջ ծիսակարգը, ներկայում գտնվում է պրպտումների և ձևերը գործողության մեջ փորձարկելու շրջանում: Երևանում ընտանեա-ամուսնական հարաբերությունների և ազգակցական կապերի ոլորտում, մի կողմից, տակավին ուժեղ է հակվածությունը ավանդութային չափանիշների և վարքի կանոնների նկատմամբ /հաստատագրված բոլոր հարսանիքների մեծ մասը՝ 59,7%, անկախ ավանդութային կամ ժամանակակից ձևից, արվել է ամուսնությանը ծնողական համաձայնությամբ/: Մյուս կողմից, մայրաքաղաքի սոցիալականացման առավել բարձր մակարդակի պայմաններում, գնում է կրտսեր սերնդի կողմից ավելի արագ ու դյուրին յուրացվող նոր արարողակարգերի զարգացման ու տարածման պրոցես: